Արձանագրություն N 2-2

ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-26/1 ծածկագրով Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի շենքի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջների ապահովման համապատասխան շինարարական աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 10.02.2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Գևորգյան

Անդամներ՝ Ա. Աչոյան
Կ. Հարությունյան
Ա. Ասատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանուչարյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Լ. Մելիքյանը

1. Գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի ուսումնասիրության մասին

(Գ. Գևորգյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ՀՀ առողջապահության նախարարությունից գրություն չի ստացվել, իսկ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից, ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամից, Երևանի քաղաքապետարանից ստացված գրությունների և «Ավանգարդ Շին» ՍՊԸ-ի, «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի համաձայն գնման ընթացակարգի մասնակիցներ «Ավանգարդ Շին» ՍՊԸ-ի և «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտերը համապատասխանում են ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-26/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4 դեմ-0:

2. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ

(Գ. Գևորգյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկները՝ «Ավանգարդ Շին» ՍՊԸ-ի և «Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտերը գնահատվել են բավարար:

2.2 ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ ճանաչել հետևյալ կազմակերպություններին՝

Գնման առարկա	Ընտրված մասնակից	Այդպիսին չճանաչված մասնակից
Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի շենքի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության պահանջների ապահովման համապատասխան շինարարական աշխատանքներ	«Ավանգարդ Շին» ՍՊԸ	«Ասֆալտ Քոնսթրաքշն» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ-0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշման վերաբերյալ

(Գ. Գևորգյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակից «Ավանգարդ Շին» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Գ. Գևորգյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Գ. Գևորգյան

Անդամներ՝ ---------- Ա. Աչոյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Ասատրյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ա. Մանուչարյան